

Տարածաշրջանային արշավ Հարավային Կովկասն առանց ականների Կոչ



Համերաշխություն Ականների զոհերի և նրանց համայնքների հետ

Հարավային Կովկասը շարունակում է մնալ աշխարհում ականներից և պատերազմի այլ չպայթած մնացորդներից առավել շատ աղտոտված տարածաշրջաններից մեկը: Եթե նույնիսկ մի կողմ դնենք ականների և այլ չպայթած զինամթերքների պատճառով վերջին երեք ու կես տասնամյակների ընթացքում գրանցված հազարավոր կորուստները, այդ թվում՝ մի քանի հարյուր կորուստ վերջին մեկ տարվա ընթացքում՝ այս աղտոտվածությունը բացասական ազդեցություն է գործում տարածաշրջանի համայնքների վրա՝ այդ թվում ազդելով տնտեսական բարեկեցության վրա և վերջիններիս անընդհատ պահելով ռիսկի և վտանգի մշտական սպառնալիքի ներքո:

2019 և 2021 թթ. «Հարավային Կովկասն առանց ականների» տարածաշրջանային արշավները հաջողության իրականացվել են ողջ տարածաշրջանում: Պետական պաշտոնյաները, ականազերծմամբ զբաղվող կազմակերպությունները և քաղաքացիական հասարակությունը միջազգային հանրության ներկայացուցիչների հետ միասին ակտիվորեն քննարկել են ականներից բխող սպառնալիքները և այն գործողությունները, որոնք կարող են իրականացվել դրանք վերացնելու նպատակով: Արշավը «Հարավային Կովկասն առանց ականների» ուղերձը հասցրել է տարածաշրջանի դպրոցներին և համայնքներին:

Մենք մեծ բավարարվածությամբ հայտարարում ենք «Հարավային Կովկասն առանց ականների 2022» տարածաշրջանային արշավի մեկնարկի մասին: Արշավը սկսվելու է նոյեմբերի 30-ին, որը նշվելու է որպես «Համերաշխության օր Ականների և պատերազմի այլ չպայթած մնացորդների զոհերի և վերջիններիս համայնքների հետ»:

Ինչպես և նախկինում, արշավն իրականացվելու է հինգ լեզուներով՝ հայերեն, ադրբեջաներեն, վրացերեն, ռուսերեն և անգլերեն: Արշավը մեկնարկելու է նոյեմբերի 30-ին և շարունակվելու է մինչև 2023 թ. հունիսի 30-ը: Արշավի ընթացքում իրականացվող գործողությունները կենտրոնանալու են պատերազմի չպայթած մնացորդների հետևանքով առկա մարդկային և տնտեսական կորուստների

վրա և մեծացնելու են հանրային իրազեկվածությունը դրանք արագ վերացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Համերաշխություն հայտնելով ականներից տուժած համայնքներին՝ մենք ցանկանում ենք վստահեցնել, որ նրանք միայնակ չեն: Մենք ցանկանում ենք նաև վերհիշել, որ տարածաշրջանում հարյուրավոր ականազերծողներ ամեն օր վտանգում են իրենց կյանքը՝ անխոչըռն աշխատելով տարածաշրջանն այս անեծքից ազատելու ուղղությամբ: Մենք գնահատում ենք նրանց աշխատանքը և շնորհակալություն ենք հայտնում նրանց արժեքավոր աշխատանքի համար: Մինչ տարածքները վերականգնվում են և օգտագործվում ըստ նպատակի, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել, որպեսզի այդ տարածքների տնտեսական շահագործումից առաջին հերթին օգտվեն տեղի համայնքները:

Մենք գնահատում ենք միջազգային հանրության աջակցությունը Հարավային Կովկասն առանց ականներից և պատերազմի այլ չպայթած մնացորդներից ազատելու ուղղությամբ իրականացվող ջանքերում: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ականազերծողների առջև ծագացած մարտահրավերներն այնքան մեծ են, որ շատ ավելի մեծ ծավալի աջակցություն է անհրաժեշտ, որպեսզի տեղում ականազերծմանն ուղղված ջանքերի կարողությունները հասցվեն այն մակարդակի, որը հնարավորություն կտա լուծել առկա խնդիրները: Այս աջակցությունը պետք է տրամադրվի հնարավորինս արագ և այնպիսի ծավալներով, որը հնարավորություն կտա էական փոփոխություններ արձանագրել:

Մենք կոչ ենք անում Հարավային Կովկասի ժողովուրդներին և միջազգային հանրությանը.

- Միացե՛ք մեզ արտահայտելու մեր համերաշխությունը ականների և պատերազմի այլ չպայթած մնացորդների զոհ հանդիսացող անհատներին և համայնքներին:
- Միացե՛ք մեզ շնորհակալություն հայտնելու ականազերծողներին:
- Միացե՛ք մեզ կոչ անելով ունենալ ականներից ազատ Հարավային Կովկաս մինչև այս տասնամյակի ավարտը կամ դրանից քիչ անց:

Տարածաշրջանային արշավ «Հարավային Կովկասն առանց ականների»

20 նոյեմբեր, 2022

Հարավային Կովկասն առանց ականների արշավը տարածաշրջանային նախաձեռնություն է որին, միջազգային գործընկերների հետ աշխատելով, մասնակցում են կազմակերպություններ Հայաստանից, Ադրբեջանից, և Վրաստանից: Արշավը համադրավում է LINKS Europe կազմակերպության և աջակցություն է ստանում Եվրամիության կողմից: Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք կապվել Պատրիկ Նորենի հետ patrick@links-europe.eu:

#LandminefreeSC22

